

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/3

3 մարտի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանի 22.02.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.12.2014 թ-ի թիվ 366 որոշման դեմ:

Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Աշտարակի տարածքային հարկային տեսչության պետի թիվ 366 որոշմամբ պետք է գանձվի 317.442 դրամ, որպես 2009թ. հունվարից 2012 թ. դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված սոցիալական ապահովության վճարի պակաս վճարված գումար: Ստանալով նշված որոշումը Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանը (այսուհետ նաև գանգատաբեր) կատարել է նախնական վճարում, հույս ունենալով վատահոյություն ձեռք բերել, որ պատրաստ է կամովի վճարել որոշմամբ գանձման առաջադրված գումարը: Այնուհետև ներկայացել է հարկային տեսչության իրավաբանական բաժին և խնդրել կազմել ժամանակացույց՝ որոշմամբ գանձման առաջադրված գումարը մի քանի ամսում մարելու համար:

Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանը հայտնում է, որ որևէ սեփականություն չունի, բայց ստանում է բարձր կենսաթոշակ և պատրաստ է ամեն ամիս իր ողջ թոշակը փոխանցել ու մարել պարտքը: Սակայն իրավաբանական բաժնում ժամանակացույց կազմելու իր առաջարկը մերժել են, պատճառաբանելով, որ իրենք նման իրավունք չունեն: Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանին առաջարկել են որոշումը ուղարկել ԴԱՀԿ, որտեղ կալանք կդնեն իր թոշակի վրա և կկատարեն գանձումները: Սակայն գանգատաբերը պարզել է, որ ԴԱՀԿ-ն իրավունք ունի արգելանք դնելու թոշակի ընդամենը 25 տոկոսի վրա և այդ դեպքում պարտքը կմարվի տարիների ընթացքում, իսկ իր առաջարկությունն ընդունելու դեպքում, այն կմարվի մի քանի ամսում:

Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանը խնդրում է հաշվի առնելով իր տարիքը և այն, որ որպես անհատ ձեռնարկատեր դադարեցրել է գործունեությունը, թույլատրել Աշտարակի ՏՀՏ-ին իր հետ կազմել ժամանակացույց 3-4 ամիս ժամկետով՝ Աշտարակի ՏՀՏ-ի թիվ 366 որոշմամբ գանձման առաջադրված գումարը մարելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 22.12.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Մելսիկ Գրիգորյանի չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 317.422 դրամ, որն առաջացել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն 2009 թ-ի հունվարից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար սոցիալական ապահովության վճարի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի

մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 23.12.2014 թ-ին ընդունվել է թիվ 366 որոշումը Ա/Ձ Մելիկ Գրիգորյանից 317.422 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում Ա/Ձ Մելիկ Գրիգորյանը նշեց, որ համաձայն է ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.12.2014 թ-ի թիվ 366 որոշմամբ գանձման առաջադրված գումարի հետ, պարզապես այն մաս-մաս վճարելու համար խնդրում է իր հետ կազմել պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Հարկ վճարողի հետ պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց կարող է կնքվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածով սահմանված կարգով: Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի համաձայն. «Սույն հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության ոչ պակաս, քան քսան տոկոսը մարելուց հետո հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի մնացած պարտավորությունը մարելու վերաբերյալ հարկ վճարողի հետ կնքելու պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել 2 ամսից մինչև 6 ամիս ժամկետով: Ընդ որում, եթե արգելադրման ընթացքում հարկ վճարողը դիմում է ժամանակացույց կնքելու համար և ներկայացնում է բավարար հիմքեր այն մասին, որ արգելանքի կիրառումը ակնհայտորեն վտանգում է իր գործունեությունը, ապա հարկային մարմնի ղեկավարը հարկ վճարողի հետ կնքում է պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց»:

Ընդ որում հարկ է նշել, որ նշված իրավադրույթը հայեցողական է և կարող է կիրառվել, եթե արգելադրման ընթացքում հարկ վճարողը ներկայացնում է բավարար հիմքեր այն մասին, որ արգելանքի կիրառումն ակնհայտորեն վտանգում է իր գործունեությանը:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Մելիկ Գրիգորյանի հետ պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց կնքելու իրավական հիմքեր չկան, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2 հոդվածի համաձայն ժամանակացույց կարող է կնքվել նույն հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում, որը, սակայն, չի իրականացվել, քանի որ չկատարված պարտավորության չափը չի գերազանցել հինգ հարյուր հազար դրամը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.12.2014 թ-ի թիվ 366 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԵԼԻԿՅԱՆ